ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
19 նոյեմբերի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Աշոտ Շահբազյանը, Սոնա Թևանյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Առաքելյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2024 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Առաջարկն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսինե Գևորգյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 15-ի հ.18 արձանագրության՝ Երևանի ավագանու Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակից

ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Արեգ Գևորգյանին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 29 հարց, որից 2-26-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N684-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
7. Վաչիկ Նալբանդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
8. Սոկրատ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
9. Կարապետ Բազիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
10. Անուշավան Ղազազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
11. Նիկոլայ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
12. Սպարտակ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
13. Երևան համայնքի սեփականություն համարվող Ա.Խաչատրյան փող. 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասն անհատույց օտարելու մասին: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա թիվ 26 հասցեում բենզալցակայան կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
16. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.15/14 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության շենքի

կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
17. Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց, հ.31/13 հասցեում մարզադպրոց կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
18. Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակ 1-ին փողոցի հ.100/1 և 100/2 հասցեներում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
19. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց պողոտա թիվ 67 հասցեում բետոնի արտադրամաս կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
21. Ե. Չարենցի փողոցի 1-ին նրբանցքի հ.2/5 հասցեում գտնվող՝ Էդուարդ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը Գ. Հովսեփյան փողոցի հ.62/15 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
22. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ.27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակել համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
25. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
26. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
27. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
28. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
29. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 254-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան կամ չզեկուցվող 2-րդ՝ «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» և 3-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Երևանի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի հերթական նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկան ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և առաջարկեց 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան կամ չզեկուցվող 19-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց պողոտա թիվ 67 հասցեում բետոնի արտադրամաս կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը դեմ է 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկին:

Ա.Գալջյանը տեղեկացրեց, որ ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը կողմ կքվեարկի չզեկուցվող 2-րդ՝ «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ քվեարկության է դրվում 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 27, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 1

Առաջարկը չընդունվեց:

Քվեարկության դրվեց 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծի չզեկուցվող 2-րդ՝ «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 12, ձեռնպահ՝ 3

Առաջարկն ընդունվեց:

Քվեարկության դրվեց 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծի չզեկուցվող 3-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 27, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 1

Առաջարկն չընդունվեց:

Քվեարկության դրվեց 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագծի չզեկուցվող 19-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց պողոտա թիվ 67 հասցեում բետոնի արտադրամաս կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 23, դեմ՝ 31, ձեռնպահ՝ 4

Առաջարկն չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց.

Օրակարգի չզեկուցվող 18-րդ՝ «Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակ 1-ին փողոցի հ.100/1 և 100/2 հասցեներում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին»,

19-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց պողոտա թիվ 67 հասցեում բետոնի արտադրամաս կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին»,

21-րդ՝ «Ե. Չարենցի փողոցի 1-ին նրբանցքի հ.2/5 հասցեում գտնվող՝ Էդուարդ Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը Գ.Հովսեփյան փողոցի հ.62/15 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին»,

23-րդ՝ «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ.27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակել համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցերի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն և նշված հարցերը հանում է քննարկումից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N684-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
6. Վաչիկ Նալբանդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
7. Սոկրատ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
8. Կարապետ Բազիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
9. Անուշավան Ղազազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
10. Նիկոլայ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
11. Սպարտակ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
12. Երևան համայնքի սեփականություն համարվող Ա.Խաչատրյան փող. 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասն անհատույց օտարելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա թիվ 26 հասցեում բենզալցակայան կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.15/14 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
16. Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց, հ.31/13 հասցեում մարզադպրոց կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

17. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
18. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
20. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
21. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 254-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
25. Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 10, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 21-րդ հարցերը:

Տ.Ավինյանը տեղեկացրեց, որ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN1-7 հավելվածների:

3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի և արտաքին գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման)

համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն որոշման N1 Հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 43-րդ կետի 5-րդ ենթակետում «մեկից» բառը փոխարինել «երկուսից» բառով, իսկ «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով.

2) 197-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«197. Շենքի, շինության կամ այլ կառույցի վրա տեղադրված և իրարից առնվազն 1.0մ հեռավորության վրա տեղակայված արտաքին գովազդի, գովազդի միջոցի մակերեսը հաշվարկվում է գովազդի ամբողջական կոմպոզիցիոն լուծման զբաղեցրած ընդհանուր մակերեսով: Հաշվարկը կատարվում է՝ կոմպոզիցիան ուղղանկյան մեջ տեղադրելով՝ ներառելով տառերի առավելագույն բարձրությունն ու լայնությունը, ինչպես նաև տառերի և բառերի միջև եղած բացատներն ու հեռավորությունները:».

3) 198-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«198. Ցուցափեղկում կամ ցուցափեղկի վրա տեղադրված (տեղակայված) արտաքին գովազդի, գովազդի միջոցի մակերեսը հաշվարկվում է փաստացի տեղադրված գովազդի ընդհանուր կոմպոզիցիոն չափով: Ցուցափեղկի ապակու հատվածի ներքին կողմից կամ առանձնացված ապակեպատ պահարանի միջոցով կոմպոզիցիոն լուծումներ ունեցող գովազդի մակերեսը հաշվարկվում է ցուցափեղկի ընդհանուր արտաքին մակերեսով:».:

4. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N684-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին» N 684-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 17-րդ փողոցը և նրբանցքն անվանակոչել «Բուժաշխատողների փողոց» և «Բուժաշխատողների փողոց, 1-ին նրբանցք:»:

5. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի «Երևան քաղաքի պատվավոր կոչումների և պարգևների մասին» N 604-Ն որոշման N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 50-րդ կետից հանել ««Երևանի քաղաքապետարան» ոսկե կրծքանշան,» բառերը:

2) 51-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«51. «Երևանի պատվավոր քաղաքացի» հուշամեդալը «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» մակագրությամբ ժապավենից կախված հուշամեդալ է, որի դիմերեսին պատկերված է՝ կենտրոնում Երևան քաղաքի զինանշանը պատկերող դրոշմաքանդակը՝ կլոր շրջանի մեջ Հայաստանի 12 մայրաքաղաքները խորհրդանշող գծանշումներով,

ձախ կողմում՝ Էրեբունի քաղաքի հիմնադրման սեպագիրը, աջ կողմում՝ Երևանի քաղաքապետարանի շենքի կամարանիստ պատկերը:»:

3) Ուժը կորցրած ճանաչել 52-րդ կետը:

4) 53-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«53. Հուշամեդալը պատրաստվում է արծաթի համաձուլվածքից և ոսկեպատվում է:»:

5) Ուժը կորցրած ճանաչել 54-րդ կետը:

6) Ուժը կորցրած ճանաչել 55-րդ կետը:

7) 58-րդ կետից հանել ««Երևանի քաղաքապետարան» ոսկե կրծքանշանը և» բառերը:

6. Վաչիկ Նալբանդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն գրականագետ, ակադեմիկոս Վաչիկ Նալբանդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.9 հասցեում փակցնելու համար:

7. Սոկրատ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ՀՍՍՀ վաստակավոր բժիշկ, պրոֆեսոր Սոկրատ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտայի հ.21 հասցեում փակցնելու համար:

8. Կարապետ Բազիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն անվանի ուռուցքաբան, պրոֆեսոր Կարապետ Բազիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզնիկ Կողբացու փողոցի հ.42 հասցեում փակցնելու համար:

9. Անուշավան Ղազազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշավան Ղազազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտայի հ.18 հասցեում փակցնելու համար:

10. Նիկոլայ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն բժիշկ-ճառագայթաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.31Ա հասցեում փակցնելու համար:

11. Սպարտակ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ ինժեներ-գյուտարար, տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ՀԽՍՀ վաստակավոր գյուտարար Սպարտակ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոցի հ.6 հասցեում փակցնելու համար:

12. Երևան համայնքի սեփականություն համարվող Ա. Խաչատրյան փող. 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասն անհատույց օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Ա. Խաչատրյան փողոց թիվ 24 շենքի հ.64 բնակարանի 1/3 բաժնեմասը (անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման №22052019-01-0306 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն բնակարանի 2/3 բաժնեմասի սեփականատեր Համլետ Ռոբերտի Ավագյանին:

13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների: Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 120-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բետոնի արտադրության գործարանը դասակարգվում է չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նույն հրամանով հաստատված նորմերի 116-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող

աղմուկից, թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը՝ (...) 4) չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 100 մ: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը չի պահպանվում, քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 93,7 մետր հեռավորության վրա:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա թիվ 26 հասցեում բենզալցակայան կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1.Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա թիվ 26 հասցեում նախատեսվող բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մյասնիկյան պողոտա թիվ 26 հասցեում գտնվող սեփականության իրավունքով քաղաքացի Տիգրան Հարությունյանին պատկանող հողամասով անցնում է Գետառ գետը, ինչի արդյունքում քննարկվող հողամասը հանդիսանում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների տակ ներառված հողամաս, ինչի պարագայում առաջարկվող օբյեկտի կառուցապատումը ընդունելի չէ:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին

15. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ.15/14 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա հ. 15/14 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

16. Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց, հ.31/13 հասցեում մարզադպրոց կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց հ.31/13 հասցեում մարզադպրոց կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

17. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 50-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլուխի աղյուսակը լրացնել նոր՝ 32-37րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

18. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (գրքերի հավաքածու), ընդհանուր՝ 30303815.33 (երեսուն միլիոն երեք հարյուր երեք հազար ութ հարյուր տասնհինգ դրամ երեսուներեք լումա) հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության գրադարաններին՝ համաձայն հավելվածի:

19. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի ««Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

20. Գույքի նվիրատվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով 2024 թվականին ձեռք բերված 6,300,000,000.00 (վեց միլիարդ երեք հարյուր միլիոն դրամ) 171 հատ Zhongtong bus LCK6860HGN մակնիշի ավտոբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

21. Գույքի նվիրատվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով ձեռք բերված, 1,416,800,000.00 (մեկ միլիարդ չորս հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 14 հատ Zhongtong bus LCK6126EVG մակնիշի տրոլեյբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 15, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2024 թվականի նոյեմբերի 19-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

22. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

1.Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2. Մեսրոպ Մանուկյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

3. Արշակ Սարգսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

4.Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

5. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

6.Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

7. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

8.Իոսիֆ Կուբատյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

9.Պեդրո Զարոկյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը և քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 16 անդամ.

1. Միքայել Խաչատրյան– Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
2. Հայկ Գրիգորյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար
4. Քրիստինե Վարդանյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
5. Մանուկ Սուքիասյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
6. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
7. Լուսինե Սարգսյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
8. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
9. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
10. Նատալյա Սինորյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
11. Սեդա Տեր-Մինասյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

12.Արմեն Մկրտչյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

13. Միեր Բեջանյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար

14.Հայկ Սահակյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

15.Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

16.Հայկ Միրզոյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստաված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան», «Ազգային առաջընթաց», «Քաղաքացիական պայմանագիր», և «Հանրապետություն» խմբակցությունների անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկան Մանուկ Սուքիասյանը, Իզաբելլա Աբգարյանը, Արմեն Գալջյանը և Անի Խաչատրյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստաված հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետով՝ մինչև քվեարկության անցկացումը Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը պահանջով հայտարարվեց 15 րոպե ընդմիջում:

Ընդմիջում.

Նիստի վերսկսվեց ժամը 14.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետից հետո լրացնել նոր 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ և 1.4-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) «30 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ 8-17 (ներառյալ) տարեկան Երևան քաղաքի հիմնական և ավագ դպրոցների աշակերտների համար՝ 7200 դրամ.

1.2) «30 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ Երևան քաղաքում հաշվառված 63 տարին լրացած կենսաթոշակառուների համար՝ 6300 դրամ.

